ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. N ----- -Ա

ՈՐՈՇՈՒՄ
«ՓԱՐՔԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 34-35-րդ, 42-րդ և 67-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.268-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 198,000,000 (հարյուր իննսունութ միլիոն) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 198,000,000 (հարյուր իննսունութ միլիոն) ՀՀ դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 198,000 (հարյուր իննսունութ հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 1000 (մեկ հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 2,309,163,000 (երկու միլիարդ երեք հարյուր ինը միլիոն հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 2,309,163 (երկու միլիոն երեք հարյուր ինը հազար հարյուր վաթսուներեք) հատ 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված

Կազմված է ----- --------2025թ.
և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Հայաստանի Հանրապետության
Երևան քաղաքի ավագանու
« » 2025թ.
N -Ա որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

Տ. ԱՎԻՆՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 27.09.2012 թ.,
գրանցման N264.120.710805

վկայական N03 Ա 860805

ՀՎՀՀ 00117375

27.09.2012թ. գրանցված կանոնադրության
թիվ ____.___ փոփոխությունը գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

_____

“____”_____ 2025թ.

«ՓԱՐՔԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

2025թ.

Ընկերության կանոնադրության 4.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2,309,163,000 (երկու միլիարդ երեք հարյուր ինը միլիոն հարյուր վաթսուներեք հազար) դրամ, որը կազմում է 2,309,163 (երկու միլիոն երեք հարյուր ինը հազար հարյուր վաթսուներեք) հատ հասարակ (սովորական) հատ անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 (մեկ հազար) դրամ:

Բոլոր 2,309,163 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության՝ 27.09.2012թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՓԱՐՔԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, այն է՝ Երևանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատում է Երևանի ավագանին:

Երևանի քաղաքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.268-Ն և Երևանի քաղաքապետի՝ 2025 թվականի հունվարի 14-ի հ.103-Ա որոշումներով, Երևան քաղաքում ավտոկայանատեղի կազմակերպման, վերահսկման և մշտադիտարկման համակարգի արդիականացման և լրամշակման նպատակով՝ հաստատվել է Երևան քաղաքի 2025թ. բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով «Փարքինգ սիթի սերվիս» ՓԲԸ-ին հատկացվելիք գումարի չափը՝ 198,000,000 ՀՀ դրամ, ինչն էլ՝ որպես կանոնադրական կապիտալի ներդրում, փաստացի հատկացվել է ընկերությանը:

Նշված գումարի սահմաններում տեղաբաշխվել է լրացուցիչ 198,000 հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը՝ 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով, ինչի արդյունքում կանոնադրական կապիտալն ավելանում է 198,000,000 դրամով:

Հատկացված գումարի չափով կանոնադրական կապիտալի ավելացումը բխում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 42-րդ հոդվածի պահանջներից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ